

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պարտադիր ժամկետային զինծառայող Արայիկ Աղասու Ավետիսյանի մահվան հանգամանքների և դրանց քննության վերաբերյալ

### ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ ԱՂԱՍՈՒ

Զորակոչվել է 2000թ. հունիսի 20-ին Վաղարշապատի զինկոմիսարիատից  
Ծառայության է անցել ՀՀ ՊՆ թիվ 70179 զորամասում /ք. Վայք/

#### 1. Մահվան պատճառների պաշտոնական վարկածը.

2001թ. հոկտեմբերի 30-ին ժամը 21-ի սահմաններում Վայք քաղաքում տեղակայված ՀՀ ՊՆ թիվ 70179 զորամասի 3-րդ գումարտակի շտաբի պետի աշխատասենյակում Կարեն Հովհաննեսի Սարգսյանը զինծառայող Արայիկ Ավետիսյանից վերցրել է փամփուշտներով լիցքավորված ՊՄ տեսակի ԼՌ-2009 ատրճանակը, մարտական վիճակի բերել այն, փողն ուղղել Արայիկ Ավետիսյանի վրա և սեղմել ձգանը: Ատրճանակից արձակված գնդակով, գործով չպարզված դրդապատճառներով սպանել է Արայիկ Ավետիսյանին:

Փաստի առթիվ ՀՀ նախկին քր. օր-ի 259.1 հոդվածի գ կետի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ (Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ, որն առաջացրել է ծանր հետևանքներ): Սույն քրեական գործը երեք անգամ Վայոց Ձորի մարզի առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններից ուղարկվել է լրացուցիչ քննության: Նախաքննությունը իրականացվել է տարբեր դատախազությունների քննիչների կողմից, որոնց ընթացքում արարքը վերաորակվել է ՀՀ քր. օր-ի 100 հոդվածի հատկանիշներով /Սպանություն/: Կատարված դեպքը նոր ՀՀ քրեական օրենսգրքի դրույթներին համապատասխանեցնելու արդյունքում սույն քրեական գործը հարուցվել է ՀՀ քր. օր-ի 373 հոդվածի 3-րդ մասով: Ներկայումս քրեական գործի վարույթը կասեցված է սպանություն կատարող անձը հայտնի չլինելու պատճառաբանությամբ:

#### 2. Մահվան պատճառների դիմումատուի վարկածը

Ըստ Արայիկ Ավետիսյանի մոր՝ Անահիտ Մկրտչյանի, իր տղային դիտավորությամբ սպանել է թիվ 70179 զորամասի 3-րդ գումարտակի հրամանատար Մհեր Ստեփանյանը՝ արձակուրդից զորամաս վերադառնալուց իր պահանջված գումարն ամբողջովին չտալու պատճառով:

Զինծառայող Կարեն Սարգսյանի կողմից անզգուշությամբ կատարված սպանության փաստը բացառելով, դիմումատուն գտնում է, որ կատարվել է դիտավորյալ սպանություն Մ. Ստեփանյանի կողմից:

### **3. Գործի քննությունը ներկայումս հետևյալ փուլում է.**

Սկսած 2001թվականից քրեական գործի նախաքննությունը ավարտված ուղարկվել է առաջին ատյանի դատարան, սակայն տարբեր ժամանակներում երեք անգամ ետ է վերադարձվել լրացուցիչ նախաքննություն իրականացնելու համար:

Նախնական վարկածով մեղադրանք է առաջադրվել համաժառայակից Կարեն Սարգսյանին, սակայն դիմումատուի կողմից վերադատության կարգով բողոքարկումների արդյունքում նրա նկատմամբ քրեական հետապնդում դադարեցվել է, որից հետո նախաքննության մարմնի կողմից **կայացվել է որոշում քրեական գործի վարույթը կասեցնելու մասին**: Սույն քրեական գործով, սակայն այլ հոդվածներով դատապարտվել են գումարտակի հրամանատար Մհեր Ստեփանյանը, գումարտակի հրամանատարի սպառազինության գծով տեղակալ Սամվել Հովսեփյանը և գումարտակի գրագիր Սարգիս Մխեյանը

### **4. Գործի քննության (հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլն) ընթացքում տեղ գտած թերացումները, ըստ դիմումատուի.**

- չնայած Արայիկ Ավետիսյանի գլխի հատվածի ոչ հրազենային վնասվածքների առկայությանը, վարույթն իրականացնող մարմինը պատշաճ կարգով չի կարողացել պարզել առաջացած վնասվածքների պատճառները,
- դիմումատուի կողմից առաջ քաշված վարկածում նշվում է սպա Մհեր Ստեփանյանի կողմից գումար պահանջելու հարցը, սակայն նախաքննության ընթացքում դրան որևէ կերպ անդրադարձ չի կատարվել, մինչդեռ վկա Արտյոմ Խաչատրյանը իր 2002թ. հուլիսի 29-ին տված ցուցմունքում նույնպես հաստատվել է այն փաստը, որ Մհեր Ստեփանյանը Արայիկ Ավետիսյանից գումար է պահանջել,
- պարբերաբար քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելը վկայում է նախաքննության մարմնի կողմից ոչ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու մասին, սակայն, այդ հանգամանքը ՀՀ զինդատախազի ուշադրությանը չի արժանացել,
- քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումն անհիմն է, քանի որ Զքմ մակերեսով տարածքում 5 հոգու ներկայությամբ կատարված դեպքով հնարավոր չէր չպարզել իրականում հանցագործությունը կատարած անձին:

### **5. Դիմումատուի առաջարկները քննության բավարար արդյունքներ ստանալու համար.**

Վերսկսել քրեական գործի վարույթը և արարքը որակել որպես դիտավորյալ սպանություն, Քր. գործի քննության շրջանակներում առաջադրել մեղադրանք սպանություն կատարող իրական մեղավորներին

Եթե նախաքննությունը ունի բավարար հիմքեր, որ արարքն իրականում Կ. Սարգսյանն է կատարել, ապա նրան մեղադրանք առաջադրել հենց դիտավորյալ սպանության մեղադրանքով :


Նախաքննությամբ հիմնավորել Մհեր Ստեփանյանի սպանության հետ կապ չունենալու հանգամանքը,


Անդրադառնալ 2006թ. օգոստոսի 1-ին ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումում նշված ապացույցներին:

**6. Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին՝**

- Հարցապնդմամբ դիմել ՀՀ Գլխավոր դատախազին՝ քաղաքացու 2006թ. օգոստոսի 1-ին հասցեագրված դիմումում նշված ապացույցների վերաբերյալ:
- Հարցում կատարել գինվորական դատախազին՝ կասեցման որոշումը վերացնելու և նախաքննություն իրականացնելու նպատակահարմարության, ինչպես նաև Կարեն Սարգսյանի կողմից դիտավորյալ սպանությունը կատարելու վարկածի վերաբերյալ:
- Հարցապնդմամբ դիմել ՀՀ ՊՆ ՌԻՎ վարչությանը՝ քրեական գործով որպես վկա ճանաչված Ա. Խաչատրյանին հայտնաբերելու և լրացուցիչ հարցաքննության ենթարկելու համար:

*Ծանոթագրություն:Սույն տեղեկանքում ներկայացված վարկածները, ենթադրությունները, եզրակացությունները, պնդումներն ու առաջարկությունները, բացառությամբ սույն տեղեկանքի 6-րդ կետում ներկայացվածների, չեն կարող որևէ դեպքում ներկայացվել որպես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներ կամ դիրքորոշումներ:*

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝  
 ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԴԻՄՈՒՄԱՏՈՒ՝  
 ԱՆԱՎԻՏ ՄԿՐՏՉՅԱՆ  
(Արայիկ Ավետիսյանի մայրը)